# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնավան, (0255)-6-29-69, lernavan.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 41

## ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ ՀԱՐԳԵԼԻ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2019թվականի դեկտեմբերի 13-ին ՀՀ Լոռու մարզի Լեռնավան համայնքի բնակիչ Հովհաննես Բեգլարյանի ներկայացուցիչ Արտուր Հարությունյանը վարչական բողոք է ներկայացրել,որով խնդրել են ՀՀ Լոռու մարզի Լեռնավան համայնքի ղեկավարի կողմից ցուցաբերված անգործությունը(կամ գործողությունները) ճանաչել ոչ իրավաչափ,որը կապված է եղել Հովհաննես Բեգլարյանի ընտանիքին առանց համապատասխան վարչական ակտ կայացնելու հերթացուցակից հանելու և 15.12.2008 թվականի հերթացուցակում չնդգրկելու հետ ընդունել բարենպաստ վարչական ակտ Հովհաննես Բեգլարյանի ընտանիքի Լեռնավան համայնքի 15.12.2008 թվականի հերթացուցակում հաշվառելու մասին:Բողոք բերողը միաժամանակ միջնորդություն է ներկայացրել բողոքարկման ժամկետը հարգելի ճանաչելու մասին:Ուսումնասիրելով վարչական վարույթում առկա փաստաթղթերը,գտնում եմ,որ բողոք բերողի կողմից ներկայացված բողոքարկման ժամկետը բաց թողնելը հարգելի ճանաչելու մասին միջնորդությունը հնարավոր է երթակա է բավարարման,իսկ վարչական բողոքը ենթակա է քննության «Վարչության հիմունքներ և վարճական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջների համապատասխան, քանի որ հերթացուցակից դուրս մնալու կապված վարչական վարույթի անդյունքների մաիսն Հովհաննես Բեգլարյանին ծանուցելու վերաբերյալ ապացույց առկա չէ,հետևաբար հիմնավոր է բողոքաբերի այն պնդումը, որ կողմը բաց է թողել բողոքարկման ժամկետը հարգելի պատճառով,իսկ ինչ վերաբերվում է վարչական բողոքի բավարարմանը, ապա գտնում եմ,որ այն անհիմն է և ենթակա չէ բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

Բողոք բերողի ընտանիքը դուրս է մնացել 2008 թվականի դեկտեմբերի 15-ին կազմված հերթացութակից, քանի որ բողոքաբերի ընտանիքը չի ներկայացրել համապատասխան թաստաթղթերը այդ պատճառով է ընտանիքը դուրս է մնացել համանքի աղետի հետևանքով

անօթևան մնացած անձանց հերթացուցակից, ուստի համայնքի ղեկավարը որևէ ոչ իրավաչափ անգործություն չի ցուցաբերել, ՀՀ կառավարության 13.11.20108թ. թիվ 1337-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ կետի ամաձայն: Համայնքի ղեկավարը 2008 թվականի ղեկտեմբերի 15-ից հետո որոշում համանքի ղեկավարը չի կարող կայացնել: Ելնելով վերոդրյալից և ղեկավարվելով «Վարչության հիմունքներ և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի «բ» կետով

Որոշեցի

Վարչական բողոքը մերժել ամբողջությամբ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնավան, (0255)-6-29-69, lernavan.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 42

### ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 09.12.2019 թվականի թիվ 01/15.2/22647-19 հանձնարարականի և Լոռու մարզպետի 09.12.2019 թվականի թիվ 723 կարգադրության 2 կետի՝

Լոռու մարզի Լեռնավան համայնքում կազմել անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Համայնքի անասնաբույժ — Գուրգեն Սաֆարյան
2. Առաջատար մասնագետ — Նելսոն Բեգլարյան
3. Աշխատակազմի քարտուղար — Հրաչյա Պարսամյան
4. Գյուղապետի օգնական — Ժաննա Այվազյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — ՎԱՀԱԳՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնավան, (0255)-6-29-69, lernavan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 43

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ «Համայնքային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի բ)ենթակետով՝

բյուջեի սեփական եկամուտների հավաքագրմանը ակտիվորեն մասնակցելու համար համայնքապետարանի աշխատակիցներին մեկ ամսվա դրույքաչափով պարգևատրել, համայնքի ղեկավար՝ Վ. Վարդանյանին, համայնքի ղեկավարի օգնական՝ Ժ. Այվազյանին, աշխատակազմի քարտուղար՝ Հ. Պարսամյանին:Աշխատանքային պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար կես ամսվա դրույքաչափով պարգևատրել՝ տեխնիկական աշխատողներ սանտեխնիկ՝ Ս. Գասպարյանին և հավաքարար Ս.Տոնոյանին:

1. Վաչագան Վարդանյան 250000 (երկու հարյուր հիսուն հազար)դրամ
2. Ժաննա Այվազյան 100000 (մեկ հարյուր հազար)դրամ
3. Հրաչյա Պարսամյան 155000 (հարյուր հիսունհինգ հազար)դրամ
4. Սերյոժա Գասպարյան 36400(երեսունվեց հազար չորս հարյուր)դրամ
5. Սուսաննա Տոնոյան 36400(երեսունվեց հազար չորս հարյուր)դրամ

Ընդամենը 577800(հինգ հարյուր յոթանասունյոթ հազար ութ հարյուր) դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԱԳԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼԵՌՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնավան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնավան, (0255)-6-29-69, lernavan.lori@mta.gov.am

# Հ Ր Ա Մ Ա Ն

23 դեկտեմբերի 2019թվականի N 12

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ «Համայնքային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի բ) ենթակետով՝

Լեռնավան համայքնի համայնքապետարանի առաջատար մասնագետ-հաշվապահ Մերի Պողոսյանին, առաջատար մասնագետ Նելսոն Բեգլարյանին, առաջին կարգի մասնագետ՝ Էմիլիա Սարգսյանին ծառայողական պարտականությունները գերազանց կատարելու համար պարգևատրել մեկ ամսվա դրույքով:

Ընդամենը՝ 420.000(չորս հորյուր քսան հազար)դրամ

1. Մերի Պողոսյան -150000(մեկ հարյուր հիսուն հազար)դրամ
2. Նելսոն Բեգլարյան -150000(մեկ հարյուր հիսուն հազար)դրամ
3. Էմիլիա Սարգսյանին -120000(մեկ հարյուր քսան հազար)դրամ

Ընդամենը՝ 420.000(չորս հարյուր քսան հազար)դրամ

Աշխատակազմի քարտուղար՝ ՀՐԱՉՅԱ ՊԱՐՍԱՄՅԱՆ